



**ԱՊԱՐԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ**

18.05.15թ.

Հասցե. ՀՀ Արագածոտնի մարզ 3103,
Ք.Ապարան, Բաղրամյան 26
Հեռ./Ֆաքս +/ 0252/ 6 23 60
Էլ.փոստ
aarhusaparan@mail.ru

ՀՀ Բնապահպանության նախարար
Արամայիս Գրիգորյանին

Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող՝
Նատալյա Մանուկյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն նախարար.

Արագածոտնի մարզի գլխավոր գետի՝ Քասաղի աջակողմյան վտակներից մեկը Գեղարտուն է, որը հոսում է Արագած համայնքի միջով: Այս, և հարակից հինգ գյուղերի մշակովի հողատարածությունները սնող Գեղարտո գետի ջրի գույնը վերջին տարիներին փոխվել է, բնակիչների պնդմամբ, փոխվել է նաև գետի ջրի որակը և համայնքի բնակիչներն իրենց մտահոգություն են հայտնում այս խնդրի առնչությամբ:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը և հավաստի տեղեկատվության տրամադրումը՝ խնդրում եմ Ձեզ Ապարանի Օրհուս կենտրոնին տրամադրել մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Բնապահպանության նախարարության կողմից իրականացվել է արդյոք այս երևույթի ուսումնասիրություն և եթե այո,
2. ո՞րն է գետի ջրի գույնի փոփոխության պատճառը և ջրի բաղադրության մեջ ի՞նչ նյութեր են պարունակվում, որ փոխում են, ոչ միայն ջրի, այլև հասակային նստվածքների՝ տիղմի, ավազի, գլաբարերի գույնը:
3. Գետի ջրի այս փոփոխությունը ի՞նչ ազդեցություն կարող է թողնել ռոտզվող հողերի, մշակաբույսերի աճի և ընդհանրապես գետի էկոհամակարգի վրա:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/): Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող՝

Նատալյա Մանուկյան